Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք!

# ՁԵՌՆԱՐԿ

## ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

336.2
Ձ-46

Հրատարակություն Ֆինանսների Ժող. Կոմիսարիատի

ԼԵՆԻՆԱԿԱՆ 1936 թ.

336.2 18.06.2013
2-46
Ա21482
05 JAN 2010

# ՁԵՌՆԱՐԿ

## ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

### 1. ԻՆՉԻ ՀԱՄԱՐ Է ԳԱՆՁՎՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏՈՒՐՔԸ

Պետական միասնական տուրքը (Госпошлина) գանձվում է գյուղական խորհրդների կողմից կատարվող գործողությունների և տրվող փաստաթղթերի համար, հետևյալ դեպքերում՝

ա) Նոտարական գործողություններ կատարելու դեպքում.

բ) Քաղաքացիական կացության ակտերը գրանցելու (Զագս) դեպքում.

գ) Վկայականներ, քաղվածքներ և այլ փաստաթղթեր տալու դեպքում.

դ) Դիմումներից, բողոքներից և հայտարարություններից։

### 2. ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ

Պետական միասնական տուրք վճարողները բաժանվում են 3 կատեգորիաների, այն է՝

ա) Առաջին կատեգորիա.

Պետական հիմնարկություններ, հասարակական կազմակերպություններ և հանրայնացված սեկտորի ձեռնարկություններ (կոլտնտեսություններ, կոոպերատիվներ, կոլտնտեսությունների փոխադարձ օգնության ընկերություններ և այլն)։

Առաջին կատեգորիայի վճարողներից պետական միասնական տուրք գյուղխորհուրդները գանձում են միայն գույք վարձակալելու պայմանագրերի նոտարական վավերացման և կատարողական մակագրություններ կատարելու համար (2 կոպ. յուրաքանչյուր ռուբլուց, հաշված պայմանագրի գումարից, սակայն ոչ պակաս 5 ռուբլուց)։

Այսպիսով, առաջին կատեգորիայի վճարողների կողմից

27613

գյուղխորհրդներին տրվող բոլոր տեսակի դիմումները, ինչպես և բոլոր տեսակի տեղեկանքները, վկայականները և այլ փաստաթղթերը ազատ են պետական միասնական տուրքի վճարումից:

բ) Երկրորդ կատեգորիա.

Բանվորներ, ծառայողներ և նրանց հավասարեցված անձինք, կոլտնտեսականներ, աշխատավորական մենատնտեսներ, առանց վարձու բանվորների աշխատող տնայնագործներ և արհեստավորներ, արտադրության պայմանների շնորհիվ մեկ վարձու բանվորի օգնությամբ աշխատող տնայնագործներ և արհեստավորներ (օրինակ՝ դարբինները), յեթե վարձու բանվորի առկայությունը նրանց չի զրկում ընտրական իրավունքից, և նշված անձանց խնամքի տակ գտնվող ընտանիքի անդամները:

գ) Երրորդ կատեգորիա.

Այլ անձիք (ոչ աշխատավորական տարրեր): Այս կատեգորիայի շարքը դասվում են նաև կրոնական միավորումները, յեկեղեցական խորհուրդները և կրոնական պաշտամունքի ծառայողները:

Յեթե գյուղխորհրդի պաշտոնական անձանց հայտնի չէ դիմող քաղաքացիների սոցիալական դրությունը, ապա նման դեպքերում վերջիններից անհրաժեշտ է պահանջել փաստաթուղթ՝ պետական միասնական տուրքի չափը վորոշելու համար: Նման փաստաթղթեր հանդիսանում են՝ հաշվեգրքույկները, արհմիության տոմսը, ծառայության կամ աշխատանքի վայրից տրված տեղեկանքները, գյուղհարկի կամ յեկամտահարկի ծանուցագրերը, ինչպես և այլ փաստաթղթերը, վորոնցով հնարավոր է վորոշել թե վճարողների վոր կատեգորիայի շարքն են դասվում դիմողները:

Փաստաթղթեր չներկայացնելու դեպքում պետական միասնական տուրքը գանձվում է, «այլ անձանց» (3-րդ կատեգորիայի վճարողներ) համար սահմանված դրույքներով:

## 3. ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՅԵՎ ԺԱՄԱՆԱԿԸ

Գրավոր դիմումները (հայտարարությունները և բողոքները) պետական միասնական տուրքով վճարվում են դիմումները տա-



ՀԱՍՌ–Арм.ССР
56553-66

լու ժամանակ: Գրավոր դիմումների պատասխանների համար առանձին վճար չի գանձվում:

Բանավոր դիմումների պատասխանների համար (տեղեկանքներ, վկայականներ, քաղվածքներ և այլն տալու մասին) պետական միասնական տուրք գանձվում է տրվող փաստաթղթերի նկատմամբ սահմանված դրույքներով: Տեղեկանքներ, վկայականներ, քաղվածքներ և այլն տալու մասին գրավոր հայտարարությունները ինքնըստինքյան պետական միասնական տուրքի յենթակա չեն: Պետմիասատուրքով վճարվում է միայն տրվող փաստաթուղթը:

## 4. ԻՆՉ ՁԵՎՈՎ ԵՆ ՎՃԱՐՎՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏՈՒՐՔՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՏՐՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հայտարարությունները (դիմումները) և տրվող փաստաթղթերը պետական միասնական տուրքով վճարվում են կանխիկ դրամը գյուղխորհրդի նախագահին կամ քարտուղարին հանձնելու միջոցով: Պետական միասնական տուրքը վճարելու մասին վճարողին տրվում է անդորրագիր, իսկ հայտարարությունների և տրվող փաստաթղթերի վրա կատարվում է նշումներ «Պետական միասնական տուրքը գանձված է ______ ռուբլի. անդորրագիր № ______»:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման համապատասխան գրանցումների 14-րդ սյունյակում (զանազան նշումներ) ցույց է տրվում պետական միասնական տուրքի վճարումը, գանձված գումարը և այն փաստաթուղթը, վորի հիման վրա հաշվարկվել է պետմիասատուրքը: Նշումը կատարելուց հետո, դրամը մուծողը պետք է ստորագրի վերոհիշյալ սյունյակում:

## 5. ՎՈՐՏԵՂ Է ՄՈՒԾՎՈՒՄ ՊԵՏՄԻԱՍՏՈՒՐՔԸ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՀԱՇՎԻ ԱՌՆՎՈՒՄ ՊԵՏՄԻԱՍՏՈՒՐՔԻ ՄՈՒՏՔ ՅԵՂԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Պետական միասնական տուրքը ամբողջությամբ հատկացվում է գյուղական բյուջեին:

Պետական միասնական տուրքի գանձված գումարները գրանցվում են մուտքերի գրքում և ամսվա վերջում, ընդհանուր գումարով, գրանցվում է դրամարկղային գրքում:

Այն դեպքերում, յերբ գյուղխորհրդների դրամարկղային սպասարկումը կատարվում է պետական բանկի հիմնարկության-

ների կամ խնայդրամարկղների կողմից—պետական միասնական տուրքը մուծվում է նշված վարկային հիմնարկությունները։

## 6. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏՈՒՐՔԸ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Պետական միասնական տուրքը չվճարելու կամ պակաս չափով գանձելու պատասխանատվությունը կրում են գյուղխորհուրդների պաշտոնական անձինք կարգապահական գանձումների կանոնադրության կարգով։ Չվճարված պետական միասնական տուրքը դիմողներից գանձվում է անվիճելի կարգով։

Պետական միասնական տուրքի գանձման վերաբերյալ բոլոր հարցերով պետք է դիմել շրջ. (քաղ.) ֆինբաժնին պարզաբանումներ ստանալու համար։

## 7. ԻՆՉ ՉԱՓԵՐՈՎ Է ԳԱՆՁՎՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏՈՒՐՔԸ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՄ

Ինչպես վերը նշեցինք, յեթե 1-ին կատեգորիայի վճարողները (հանրայնացրած սեկտոր) ցանկանում են վավերացնել կնքված գույքային վարձակալության պայմանագիրը գյուղխորհրդում ապա նման պայմանագրերը պետք է պետմիասատուրքով վճարվեն պայմանագրի գումարի յուրաքանչյուր ռուբլուց 2 կոպեկի չափով, սակայն վոչ պակաս 5 ռուբլուց։

Փոստը փոխադրելու համար կոլտնտեսությունների և ժողկապի մարմինների մեջ կնքված պայմանագրերը պետական միասնական տուրքի վճարումից ազատվում են։



| ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ | Աշխատավորներից (վճարողների 2-րդ կատեգորիա | Վոչ աշխատավորական տարրերից (վճարողների 3-րդ կատեգորիա |
|---|---|---|
| **Ա.** ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | |
| 1) Հանձնարարության պայմանագրեր և գնահատման վոչ յենթակա պայմանագրեր վավերացնելու համար։ | 2 ռուբլի | 10 ռուբլի |
| 2) Փոստը փոխադրելու մասին կապի ժողկոմատի հետ կնքված պայմանագրեր վավերացնելու համար 3000 ռուբլուց վոչ բարձր գումարով։ | Պայմանագրի գումարի յուրաքանչյուր մեկ հարյուր ռուբլուց 25 կոպ., սակայն վոչ պակաս 1 ռուբլուց. (այսինքն 0,25% պայմանագրի գումարից, սակայն վոչ պակաս 1 ռուբ.) | Պայմանագրի գումարի յուրաքանչյուր մեկ ռուբլուց 2 կոպ., սակայն վոչ պակաս 5 ռուբլուց (այսինքն՝ 2% պայմանագրի գումարից, սակայն վոչ պակաս 5 ռուբլուց) |
| 3) Շենքի առ և վաճառքի պայմանագրեր վավերացնելու համար 600 ռուբլուց վոչ բարձր արժողությամբ։ | Նույնպես | Նույնպես |
| 4) Այլ պայմանագրեր—500 ռուբ. վոչ բարձր գումարով վավերացնելու համար։ | Նույնպես | Նույնպես |
| 5) Աշխատավարձի և արհմիության մուծվող գումարների գանձման մասին (հովիվներ և գյուղատնտեսական բանվորներ վարձելու—գրավոր աշխ. պայմանագրերի, կամ համապատասխան հաշվեգրքույկների կամ հաշվեթերթիկների հիման վրա) կատարողական մակագրությունների համար պետմիասատուրքը գանձվում է 1 կոպ. յուրաքանչյուր ռուբլուց, սակայն վոչ պակաս 1 ռուբլուց։ Պետ միասատուրքը գանձվում է վոչ թե դիմողից, այլ վարձողից (կոլտնտեսություն, խորհտնտեսություն և այլն) մակագրությունը իրագործելու, այսինքն գանձումը կատարելու ժամանակ։ | | |
| ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.- Պետմիասատուրքը գանձելիս, վորի դրույքը սահմանված է տոկոսային հաշվով փաստաթղթի գումարից, պետմիասատուրքի գումարը կլորացվում է մինչև լրիվ ռուբլիներ—50 կոպ. պակաս գումարը հաշվից հանվում է, իսկ 50 կոպ. ավելը ընդունվում է մեկ ռուբլու տեղ։ | | |

| | | |
|---|---|---|
| 6) Ստորագրությունների իսկությունը վավերացնելու համար | Ազատ են | 3 ռուբլի փաստաթղթից (և վոչ թե ստորագրությունից |
| 7) Պատճենների և քաղվածքների ճշտությունը հաստատելու համար | 1 ռուբլի յուրաքանչ. յերեսից | 3 ռուբլի յուրաքանչյուր յերեսից |
| 8) Գույքի կառավարման լիազորագրերի վավերացման համար. | 10 ռուբլի | 25 ռուբլի |
| 9) Դատական և վարչական հիմնարկություններում գործեր վարելու լիազորագրերի վավերացնելու համար. | 3 ռուբլի | 10 ռուբլի |
| 10) Այլ լիազորագրերը վավերացնելու համար. | Ազատ են | 10 ռուբլի |
| Բ | | |
| ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ՎՃԱՐՈՒՄ | | |
| 1) Ծննդյան, մահվան, վորդեգրման մասին գրանցումներ կատարելու և հայրություն սահմանելու մասին արված հայտարարությունների համար. | Ազատ են | Ազատ են |
| 2) Ամուսնության գրանցման համար | 3 ռուբլի | 15 ռուբլի |
| 3) Ապահարզանի (ամուսնալուծման) գրանցման համար՝ | | |
| ա) Առաջին ապահարզանից | 50 ռուբլի | 50 ռուբլի |
| բ) Յերկրորդ » | 150 ռուբլի | 150 ռուբլի |
| գ) Յերրորդ » | 300 ռուբլի | 300 ռուբլի |
| Համաձայն ԿԳԿ-ի և ԺԿԽ-ի 1936 թ. հունիսի 27-ի որենքի «աբորտների արգելման մասին». | | |
| 4) Ծննդյան, մահվան, վորդեգրման, հայրության հաստատելու մասին, ամուսնության և ապահարզանի (ամուսնալուծման) գրանցման մասին նախնական քաղվածքները, վորոնք առաջին անգամ տրվում են քաղաքացիներին իրենց անձնական կարիքների համար. | Ազատ են | Ազատ են |
| ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Մահվան մասին քաղվածքը, վորը տրվում է թաղման համար, ազատ է պետտուրքից և չի համարվում վորպես նախնական քաղվածք. | | |
| 5) Ծննդյան, մահվան, վորդեգրման, ամուսնության և ապահարզանի (ամուսնալուծման) գրանցման մասին կրկնակի քաղվածքներ տալու համար: | 1 ռուբլի | 5 ռուբլի |
| ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այն կրկնակի վկայականները (քաղվածքները) | | |



| | | |
|---|---|---|
| վորոնք տրվում են ներկայացնելու համար արդյունաբերական և արհմիութենական կազմակերպություններին-նպաստ ստանալու, զինկոմատներին՝ զինվորական ծառայության (զինակոչիկի տարիքը վորոշելու, ըստ ընտանեկան դրության արտոնություն ստանալու համար և այլն) ուսումնական ձեռնարկություններին, դատարան՝ ըստ քրեական, ապրուստի միջոցների (ալիմենտի), խնամակալության, անչափահասների սոցիալական պաշտպանության և վորդեգրման գործի համար. | Ազատ են | Ազատ են |
| 6) Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մերժելու դեմ տրվող բողոքները | Ազատ են | 10 ռուբլի |
| Գ | | |
| ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԲՈՂՈՔՆԵՐԻ, ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՅԵՎ ՔԱՂՎԱԾՔՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ | | |
| 1) Բողոքներ հարկերի մասին՝ | | |
| ա) հաշվարկված հարկի գումարը մինչև 500 ռուբլի լինելու դեպքում. | Ազատ են | 10 ռուբլի |
| բ) 500 ռ. բարձր մինչև 5000 ռուբլի | Ազատ են | 15 ռուբլի |
| գ) 5000 ռուբլուց բարձր. | Ազատ են | 30 ռուբլի |
| ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—1) Յեթե միյեվնույն մեկ բողոքը տրվում է յերկու կամ մի քանի վճարումների դեմ (օրինակ գյուղհարկ և կուլտհավաքը), ապա բողոքը պետք է պետտուրքով վճարվի նայած այն վճարումների ընդհանուր գումարին, վորոնց հաշվարկի դեմ տրվում է բողոքը | | |
| ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—2) Յեկամտահարկի № 3 ցանկով հարկելու կամ անհատական կարգով գյուղհարկի յենթարկելու դեմ տրվող բողոքները՝ պետտուրքով վճարվում են բողոքները տալու ժամանակ-յեթե բողոքատուն չի առարկում հարկման համար հիմք ծառայող հատկանիշի, սակայն վիճում է այն գումարի դեմ վորը հաշվարկվել է վոչ աշխատավորական տարրերի նկատմամբ սահմանված դրույքներով: Բայց յեթե բողոքատուն, տրվող բողոքում առարկում է անհատա- | | |

| | | |
|---|---|---|
| կան կարգով գյուղհարկի յենթարկելու կամ յեկամտահարկի № 3 ցանկով հարկվելու-փաստի դեմ, ապա բողոքը տալիս պետմիտասուրք չի գանձվում. | | |
| Բողոքը մերժելու դեպքում պետմիտատուրքը գանձվում է բողոքի մասին վորոշումը հայտարարելիս. | | |
| 2) Այլ բողոքներ և դիմումներ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—1) Կոլտնտեսությունից վտարելու դեմ տրվող բողոքները պետմիտասուրքով չեն վճարվում: | Ազատ են | |
| ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—2) Պետմիտատուրքից ազատ են այն բոլոր բողոքները և հայտարարությունները պաշտոնատար անձանց զեղծարարությունների և անօրինակ գործողությունների դեմ, վորոնք յենթակա են քրեական կամ կարգապահական հետապնդման: | | |
| 3) Դիմումներ-տեղեկանքներ և վկայականներ՝ | | |
| ա) տուն կառուցելու թույլտվություն տալու մասին | Ազատ են | 10 ռուբլի |
| բ) տուն վաճառելու թույլտվություն տալու մասին. | Ազատ են | 10 ռուբլի |
| գ) կոնֆիսկացիայի յենթարկված գույքի վերադարձման մասին | Ազատ են | 10 ռուբլի |
| դ) գույքի բաժանում կատարելու թույլտվություն տալու մասին. | Ազատ են | 10 ռուբլի |
| յե) տնամերձ հողամաս հատկացնելու մասին. | Ազատ են | 10 ռուբլի |
| զ) գյուղական դատարաններին տըրվող հայցախնդիրները, ինչպես և այդ դատարանների կողմից տրվող բոլոր տեսակի փաստաթղթերը. | Ազատ են | Ազատ են |
| է) կրոնական միավորումը վերացուցակագրելու մասին տրվող հայտարարությունները. | — | 10 ռուբլի |
| ը) Նոր ընդունված կրոնական պաշտամունքի ծառայողին ցուցակագրելու մասին տրվող հայտարարությունները. | — | 10 ռուբլի |
| թ) կրոնական պաշտամունքի ծառայողի դուրս գալու մասին տրվող հայտարարությունները (ուրիշ միավորում փոխադրվելու, մահվան և այլ պատճառներով). | — | 10 ռուբլի |



| | | |
|---|---|---|
| ժ) արտոնյալ տարիֆներ ստանալու համար յերկաթուղու վարչությանը ներկայացվող տեղեկանքներ տալու համար. | Ազատ են | 10 ռուբլի |
| ի) մթերային քարտեր ստանալու նպատակով տրվող տեղեկանքների համար. | Ազատ են | — |
| լ) ծառայության կամ աշխատանքի վայրը ներկայացնելու նպատակով տրվող զանազան տեսակի տեղեկանքների համար: | Ազատ են | — |
| խ) քաղաքական իրավունքը հաստատող (ընտրական իրավունքից զրկված չլինելու, ընտրական իրավունքը վերականգնելու և այլի մասին) տեղեկանքներ քաղաքացիներին տալու համար. | Ազատ են | Ազատ են |
| ծ) ընտրական գործերի հետ կապված փաստաթղթեր տալու համար. | Ազատ են | Ազատ են |
| կ [illegible]ումներ (կորեսպոնդենցիա) ստացող անձը վավերացնելու (հաստատելու), ինչպես և փոստից փոստային առաքումներ ստանալու մասին փոստային ծանուցագրերի վրա լիազորագրերը վավերացնելու համար. | Ազատ են | Ազատ են |
| հ) վկայականներ, քաղվածքներ և այլ փաստաթղթեր (բացի նրանցից, վորոնք նշված են վերևում) տալու համար: | 1 ռուբլի յուրաքանչյուր փաստաթղթից | 5 ռուբլի յուրաքանչյուր փաստաթղթից |
| ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Յեթե փաստաթուղթ տալու մասին հայտարարությունը վճարված է պետմիտասուրքով, ապա այդ հայտարարության հիման վրա տրվող փաստաթուղթը պետմիտատուրքով չի վճարվում: | | |

Դ.

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

ա) Քաղաքացիների յերկու կողմերի հայտարարությամբ ամուսնությունը կամ ապահարզանը (ամուսնալուծումը) գրանցելիս, յեթե նրանցից մեկը պետմիտասուրքի վճարումից ազատված է, ապա պետմիտասուրքը լրիվ վճարում է մյուս անձը համապատասխան կատեգորիայի վճարողի դրույքով:

բ) Այն անձինք, վորոնք մասնակի կամ լրիվ գտնվում են այլ քաղաքացիների խնամքի տակ պետմիաստուրքը վճարում են այն անձանց գրույքներով (կատեգորիայով) վորոնց խնամքի տակ նրանք գտնվում են։

գ) Ամուսնությունը գրանցելիս, յեթե ամուսնացողներից նույնիսկ մեկը պատկանում է վոչ աշխատավորական տարրերին, ապա պետմիաստուրքը գանձվում է բարձր գրույքներով (կատեգորիայով)։

Խնամքի տակ գտնվողի ամուսնությունը խնամողի յեկամուտ ունեցողի հետ գրանցելիս պետմիաստուրքը նույնպես գանձվում է դիմողներից մեկն ու մեկի կամ խնամողի բարձր գրույքով (կատեգորիայով)։

դ) Մեկ կողմի հայտարարությամբ ամուսնալուծումը գրանցելիս պետմիաստուրքը գանձվում է այն կատեգորայի գրույքներով վորին պատկանում է հայտարարողը։

ԵՆ.

ԻՆՉՊԻՍԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԱԶԱՏՎԱԾ ԵՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ

Բոլոր այն հայտարարությունները և տրվող փաստաթղթերը վորոնք կապված են՝

ա) կուլտ-կրթական գործերի

բ) ռազմական գործերի

գ) քրեական գործերի

դ) ընտրությունների և քաղաքացիների քաղաքական իրավունքների գործերի.

յե) խնամակալության, վորդեգրման և անչափահասների սոցիալ-իրավական պաշտպանության գործերի.

զ) սոցիալական ապահովագրման և սոցիալական ապահովման իրավունքների իրագործման վերաբերյալ գործերի.



ե) աշխատանքային գործերի

ը) պետական փոխառությունների իրացման և մարման վերաբերյալ գործերի.

թ) ապրուստի միջոցների (ալիմենտի) գանձման, կամ մահվան, հաշմության վնասների փոխհատուցման հետ կապված գործերի։

ժ) կոլտնտեսականներին և աշխատավոր մենատնտեսներին անհրաժեշտ կոլտնտեսության հետ կապված փաստաթղթերը.

ի) Նույն անձնավորություններին անհրաժեշտ հացահատիկ աղալու համար փաստաթղթերը.

լ) բանվորներին և ծառայողներին աշխատանքի մտնելու կամ վարձու աշխատանքի համար անհրաժեշտ փաստաթղթերը։

Զ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՑ Ո՞Վ ՅԵՎ ԻՆՉ ԴԵՊՔԵՐՈՒՄ ԱԶԱՏՎՈՒՄ ԵՆ ՊԵՏՄԻԱՍՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ

Պետմիաստուրքից ազատվում են՝

ա) ԲԳԿԲ կադրային-շարային և պետկազմին պատկանող զինվորական ծառայողները (բացի յերկարատև արձակուրդայիններից). բանվորա-գյուղացիական միլիցիայի, ուղղիչ աշխատանքային հիմնարկությունների և ռազմականացված պահակի ոպերատիվ-շարային, վարչատնտեսական կազմին պատկանող աշխատակիցները, ՄԳՔՎ հատուկային աշխատակիցները, ինչպես և կարմիր պարտիզաններն ու կարմիր գվարդիականները դատական և վարչական հիմնարկություններում գործեր վարելու և աշխատավարձ ու դրամական, փոստային ու ծանրոցային-առաքումներ (կորեսպոնդենցիա) ստանալու նպատակով հավատարմագրերի նոտարական վավերացման համար։

բ) «Ա» կետում նշված անձինք և նրանց ընտանիքների անդամները —

գույքային վարձակալության պայմանագրերի նոտարական վավերացման համար.

գ) բանվորները և ծառայողները— աշխատավարձ ստանալու մասին հավատարմագրերի վավերացման համար, նույնպես և աշխատավարձի գանձման մասին կատարողական մակագրություններ կատարելու համար, յեթե միայն նման մակագրությունների կատարումը գյուղխորհրդի վրա յե դրված.

դ) այն գործազուրկները, վորոնք սոցապից ստանում են նպաստ կամ ճանաչված են այդ նպաստը ստանալու իրավունք ունեցող, հավասարապես և արհմիություններից նպաստ ստացողները.

յե) այն անձինք, վորոնք սոցիալական ապահովության կամ սոցիալական ապահովագրման կարգով ստանում են նպաստ։

զ) այն ուսանողները, վորոնք ստանում են պետական թոշակ.

է) այն աշխատավորները, վորոնք գյուղխորհրդի կողմից ճանաչված են պետմիաստուրքը վճարելու միջոց չունեցողներ տվյալ նոտարական գործողության համար։

## 8. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՍԿՈՒՄԸ ՅԵՎ ՊԵՏՄԻԱՍՏՈՒՐՔԻ ԳԱՆՁՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

Պետմիաստուրքի գանձման ասպարեզում գյուղխորհուրդների աշխատանքի ղեկավարությունը և այդ աշխատանքի ստուգումը տարվում է շրջանային ֆինբաժինների կողմից, նույնպես և այն մարմինների կողմից, վորոնք ղեկավարում են գյուղխորհուրդների պետմիաստուրքով վճարվող գործողությունների և փաստաթղթերի կատարման աշխատանքները (նոտարական գրասենյակները, զագսի մարմինները և ուրիշները)։

Շրջֆինբաժինները պետք է սիստեմատիկորեն ստուգեն գյուղխորհուրդների աշխատանքները պետմիաստուրքի գանձման ասպարեզում և ստուգեն գյուղվերահսկիչ հանձնաժողովների աշխատանքները այդ բնագավառում։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ–Арм ССР
им. А. Мясникяна



ՀՀ Ազգային գրադարան
NL0209308

771

27695

Գլավլիտ № 532 Տիրաժ 2100

Տեղարդի տպարան Լենինականում